



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱԲԱԹԱԹԵՐՑ

Ա. Զ. Ա. Յ. Ի.

ԳՐԱԿԱՆ - ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ԳԻՏԱԿԱՆ

ԳԱՐԻՎ-ՏՆՈՐԵՆ

ՀԱՄԲ. ՖՈՒԼՏՔԱՅԵՆ


ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵՐ. ՊԱՐՍԱՄԵՆ



Դ. ՏԱՐԻ, ՆՈՐ ՇՐՋԱՆ, ԹԻՒ 15

ՀԱԲԱԹ, 15 ՓԵՏՐՈՒԱՐ 1919



ԷԼԵՖԹԵՐԻՈՍ ՎԵՆԻԶԵԼՈՍ

## ODE A LA FRANCE

---

La beauté de ta haute figure, qui depuis des siècles, comme une clarté conductrice, rayonne sur l'humanité, est devenue, ô France, à travers l'horreur de ce gigantesque cauchemar, plus radieuse encore et plus pure.

Au milieu des nations qui luttent contre le démon de la tyrannie, tu sembles être le génie même de la liberté menant la lutte.

Tes armes flamboient de lumière, de la lumière sereine dont ta victoire va transfigurer le monde.

Tes yeux, au plus fort de l'affreuse mêlée, gardent une expression, non de haine, mais d'amour, l'amour de l'humanité qu'étouffe la tyrannie et que ton effort sublime veut délivrer.

Ton bras, maniant le glaive de justice, a les mouvements harmonieux du sculpteur dont la main fait naître sous ses coups, dans l'épaisse et confuse matière, une vie neuve et parfaite.

Le sang coulant des blessures qui déchirent tes flancs est rouge de la rougeur sacrée des aurores.

Et n'est-ce point l'aurore du monde de demain, du monde libéré, qui brille déjà, ô France, dans cette rougeur divine ruisselant de tes flancs ?

ARCHAG TCHOBANIAN

---

## ԱՆՈՆՔ Կ'ԱՊՐԻՆ՝ ԻՐԵՆՑ ՄՏԱԾՈՒՄԻՒՆ ՀԵՏ

---

Երջանկութիւնը անպատճառ կ'այցելէ ձեզի ձեր կեանքին մէջ, յոյսով եւ խանդով սպասեցէք անոր. բայց երբ անգամ մը յայտնուի անիկա, դողացէք անոր վրայ ու գորովանքով նայեցէք անոր. մի՛ խրտչեցնէք զայն, որովհետեւ դիւրաքեկ եւ փափուկ ծաղիկ մըն է անիկա, որ կրնայ թառամիլ, անմիշապէս ծաղկելէ ետքը :

1913

ԶԱՊԷԼ, ԵՍԱՅԵԱՆ

Հոգիին լոյսը գօրաւորագոյնն է բոլոր լոյսերէն. — ան է որ կը ցուցնէ կատա-

թելութեան ճամբան :

Պէտք է վախնալ զայն մարելէ, որովհետեւ, անգամ մը որ մարի, այլ եւս

1915

ԼԻՊԱՐԻՑ ՆԱԶԱՐԵԱՆ  
(ԽԲՇԱՅԱՆ)

Կեանքիս մէջ զզացած չէի կորուստի վիշտը անոնց, որոնք կոչուած էին մար-ներ լինելու: Ես այժմ կը հասկնամ ժողովրդի այն զիտակցութիւնը, որ չի ըմբռուսենած էինք մեր անմահներու մահը . . . անոնց է որ կոչած են աստուածներ: Մենք ալ իսկ այն ուժը որ կրնայ մեռցնել աստուածներն իսկ եւ չունի սրբութիւններ — նա երբէք չի կրնար ապրիլ, որովհետեւ պաշտամունք չունեցողը անկարող է ապրիլ:

1919

Վ.Ա.ԶՈՒ ՓԱ.ՓԱ.ԶԵԱՆ

Խնդալ առանց ատելութեան, հեղնել առանց դառնութեան, հարուածել ո՛չ թէ վնասելու այլ ուղղելու համար, բարի ըլլալ չարութեան զիմակին ներքեւ, խը-նայել տկարներուն եւ երբեք չատորնանալ գօրաւորներու զիմաց. ահա՛ ճշմարիս

երգիծաբանին դերը :

1915

[Ս. Աշտուածի Յիշատակաբանէն քաղուած, Անժիդ]

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

## ԻԹԹԻԿԱՏԻ ՀԱՅԱԶԻՆՁ ՆՈՊԱՆ

2.

### ԶԱՆԴՐԸ ԱՔՍՈՐԱՎԱՅՐ

(22/5 ապրիլ/մայիս — 27/9 հոկտ./նոյ. 1915)

**Զօրանոցէն դուրս . քաղաք մտած ենք :** իւրաքանչիւր ոք առանձին , կամ պղտիկ խումբերով միացած , յարմար բնակութեան վայր մը կը փնտուէ : **Զօրանոցի մեր հասարակապետութիւնը յանդած է , իրարմէ անկախ բազմաթիւ խմբաւորումներու :**

**Քաղաքին շուկաներն ենք ամէն օր , լրացնելու համար մեր նոր բնակարաններուն անհամեշտ պէտքերը : Թուրք ազգաբնակչութիւնը , առջի վայրիկեանէն արդէն տեղեկացած մը Զանդլը ժամանումին , սամիկ զարմացումով ու հետաքրքրութիւնով կը շրջապատէ մեզ , մեր առուտուրին ատեն յաճախ հարցումներ ալ ընելով : Քաղաք մուտքէն առաջ , մեր մասին առասպեկտներով մնուցած են անոր հայամերժ այլազգի մը տայնութիւնը և մննք կը զգանք անոր վերապահ զգուշաւորութիւնը կարծես չի հպելու համար մեզ : Մեր առուտուրին մէջ առատաձեւնութեամբ պահանջուած գինը վճարելով , կ'ընկձենք հետզհետէ այդ կասկածոտները մեր վատանգաւոր գոյութիւններուն հանդէպ , և տակաւ կը ցածնուն իրենց շինուած ատելութիւնները և ոտք հանուած կիրքերը : Քաղաք ելենէս երկու օր վերջ , իրիկուն մը , ստուերներուն հետ քաղաք կը մտնեն մեր ընկերներէն քսանի չափ յետամիացներ , որոնք Պոլսոյ մէջ նոյն գիշերը մեղի հետ հաւաքուած , բայց կարելի չէ եղած զիրենք մեղի հետ ճամբել : Բոլորովին ընկձուած , անաւացած զոյգ զոյգ իրարու ետեւէ կը քալեն սատիկանէ մը ընկերացուած : Իրենց ընդ առաջ կը փութանք : կ'ընկերանանք մինչեւ լոստիկանատուն , և պայմանագրական արձանագրութենէն յետոյ անմիջապէս տիրութիւն կ'ընենք այդ տնակորոյսներուն , մեր սըրտերուն հետ լայն բանալով իրենց մեր նորահաստատ տուներուն դուռները :**

**Զանդրըի մէջ՝ աքսորականներ ենք մննք :** եղած հրամանի մը համեմատ ամէն առաւօտ կը ներկայանանք սատիկանատուն , անձամբ ապացուցանելու մեր ներկայութիւնը : Պոլսէն դուրս մինչեւ այս վայրիկեանը , թուրք արդարութիւնը չէ հաճած իսկ դատել մեզ և վճիռը մեր ետեւէն հասած , կը սկսի գործադրուիլ : Դատապարտուածներ ենք թէ պատանդներ . մեզի դէմ նենդութիւնը անստոյդ կը պահէ մեր դիրքը : Ամէնուս ակնկալութիւնը Պոլսոյ կառչած է . անկից փրկութիւն կը սպասենք : Ծայր առած է եռանդուն թղթակցութիւն մը Պոլսոյ մեր մարդոց հետ և աղերսագիրներ ներքին գործերու նախարարու-

թեան . ամէնքն ալ խնդրանքն ու պահանջումն են մեր վերադարձին , ու ամէնքն ալ այս մասնաւոր և պաշտօնական գրուածներուն մէջ՝ ինքնինին անպարտ կը դաւանին : Ո՛րքան միամը-տութիւն մեր կողմէ , որ տակաւին չենք թափանցած երիտասարդ թուրքերուն տրամադրութեան ու դիտաւորութիւններուն , ընդդէմ ամէն հայ իրականութեան , որ կենսունակութիւն ու արժէք ունի իր մէջ :

**Աքսորականի մեր առաջին օրերուն Պոլսէն հսկող մարմին մը կուգայ . միայն մեզմով զբաղելու համար . հինգ ոստիկան և մէկ ոստիկանապետի օգնական :** Առոնք քաղաքին մէջ կառավարչատունէն անջատ , չէնք մը կը վարձեն , հոն կը հաստատուին և մննք կը սկսինք իրենց ներկայանալ ամէն օր : Ա՛լ իրենց կը պատկանինք և անոնք պոլսական պոնիկ քաղաքավարութեան մը զպարին ներքեւ քսութիւններ կը փորձեն դաւել մեղ դէմ : Ամէն առաւօտ ներկայանալուս , կը զգանք թէ գողունի բայց յամառ աչքեր մանրակրիտ քննութիւնէ մը կ'անցընեն մեղ և կ'ապրինք ամէն անգամ հոգիի տեսակ մը անձկութիւն , որ աքսորականին է և որ անոր մէջ կը ջլատէ ինքնավագտանութիւնը :

**Աքսորի առաջին շաբաթներուն՝ յոյսով լեցուած ենք և ամէնքս ալ նպաստաւոր լուրերու կը սպասենք Պոլսէն , բայց վհատութիւնը տիրողն էր մեր մէջ ամէն բանէ վեր : Ահա՛ հակասական հոգեբանութիւնը աքսորականին : Ու ասոր համար է որ աքսորականը ինքն իրեն դէմ հակասող գոյութիւնը ելած է միշտ : Քաղաքական յանցաւորներու պատիմներու պատմութեան մէջ՝ աքսորը նարիմաց գիւտ մըն է : Մարդ կրնայ լաւագոյն պայմաններով ապրիլ աքսորավայրի մը մէջ , առողջ ըլլալ , բարեկեցիկ ու հանգիստ , բայց կը դադրի ըլլալէ այն որուն համար բաժնեցին զինքը իր միջավայրէն : Աքսորի մէջ , քաղաքական գործիչը կը վերածուի պարզ անհատի մը , նոյն իսկ եթէ պահած ըլլայ ան իր սեփական իմացականութիւնը , համոզումները և ճաշակը : Աքսորը բանամիջոց մըն է անհատականութիւններէն միօքինակ անհատներ շինելու համար : Ու այն պետութիւնները կամ ազգի մը այն շրջանները ու ընդքարութիւնները կարգերու միօրինակութիւնը ուղած են պահել , ամենէն շատ թիւով աքսորականներ ունեցած են :**

\* \*

**Զօրանոցի կեանքէն վերջ , մեր առաջին կիրակին քաղաքին մէջ , հոգեկան միսիթարութեան օր մը եղաւ ամէնուս համար : Լեցուած ենք , միայրկանի , առանց աստիճաններու բարձրացումի , սեղանի , պղտիկ փայտաշէն մատուրին մէջ , զոր հայ բարեպաշտութիւնը կրցեր է ունենալ , գերա-**

զանցապէս թուրք հակաքրիստոնեայ միջավայրի հեթանոս պայմաններուն տակ: Հայը յամառօրէն անհատապաշտ, երբեք չէ զիջած որ ազգային գերագոյն հարատութիւնը եղող իր առաքելափառ Եկիղեցին առնեն իրմէ:

Եկեղեցիի ինկարկութիւնը հոգիի յուղումով մը կը գինովցնէ մնզ: Զօրանոցի հսկումները առանց խնկարկութեան էին: Կոմիտաս վարդապետ և իրենները վիշող փղձկումի մսիթարող խոռվքը կուտան մեր հոգիններուն: Ես ամենէն աւելի՛ այս առիթով զգացած եմ թէ կրօնքը և ի մասնաւոի քրիստոնէական կրօնքը թշուառին ապաւէնն է: Ասոր համար մնք, հոգիով թշուառացած աքսորականներս, անկից վերջ կիրակի առաւտները մսիթարութեան մեր բաժինը կ'երթանք առնել ամէնուն Սսուծմէն:

Քաղաքը ելլենուս տասը օր վերջ, մեղմէ ութը հոգինոց խումբ մը, եկած հրամանին վրայ Պոլիս կը վերադառնայ: Նոր ակնկալութիւններու ասպարէզ մըն է որ կը բացուի ամէնուս համար: Ստիկա բարի նշան մը կ'ընդունինք թէ ամէնքս ալ հետզհետէ այդ սակաւներուն պիտի հետեւինք: Տեղեկացած ննք արդէն թէ Պապը Սլիի մէջ մասնաւոր յանձնախումբ մը կազմուած է մնէ իւրաքանչիւրի մասին քննութիւն կատարելու համար, և մնք հակառակ հայ ըլլանուս, ինքնինքնիս անմեղ կը դաւանինք և այդ մարմինէն արդարութիւն կ'ակնկալենք: Իթթիհատաւալաններու հայաննդ ծածկամութիւնը ո՞րքան տիրած է եղեր մեր մտքերուն:

Երկու ամիսներ ի զուր կը սպասենք նոր բարեացակամ հրամաններու: Մեր յոյսերու հորիզոնը վերջնապէս չէ մթագնած տակաւին: Միայն, պղտիկ խուճապի մը կը մատնուինք թերթերու մէջ կարդալով տասնեինը հնչակեաններու Պոլսոյ մէջ կանուած ըլլալու լուրը: Գիտենք թէ անոնց մեծ մասը անմասն է բոլորովին վերագրուած յանցանքէն և մեր անմեղութեան գիտակցութիւնը, եղերական գախճանին դէմ ապաւէն մը չէ այս մեզի համար:

Առտու մը արշալոյսին, Պոլսէն հանուենուս երկու և կէս ամիսի չափ վերջ, ոստիկաններափիկ'առնեն ամէնուս դուռը, պատուիրելով՝ որոշ ժամու մը հաւաքուիլ կառավարչատան առջեւ: Դեռ թուրք եղեռնը չէ շղթայազներծուած հայուն գիտուն: Համեմատաբար հանդարտ խղճմտանքով մը, որոշուած ժամուն կը հաւաքուինք կառավարչատան պարտէը: Օր մը առաջ մնէ տասն և ինը հոգիններու Պոլս վերագրածի հրամանը հաղորդուած էր ենթականներուն:

Կառավարչատան սանդուխէն դէպ ի վարապերասան լրբութեամբ կը կարդացուին անունները մեր ընկերներէն յիսուն երկուքին, մեր մկանաւորները և ամենէն երիտասարդ մտաւորականները, և վեհանձնօրէն քառորդ ժամ մը կը տրուի անոնց մեկներու համար:

Նոյն այն կառքերով որոնցմով եկան էինք կը կազմուի հիմա մասնակի կարաւան մը, մնացող-

ներուն աչքին տակ: Էնկիւրի պիտի երթան եղեր, ինչո՞ւ չենք գիտեր. Տէր-Զօրը Հայուն համար անծանօթն է գեռ: Յիսուն երկու անգամ կ'որբանան մեր հոգինները, ճամբու դնելով այդ աղիտաւոր կարաւանը մեր դժբախտ աքսորակիցներուն:

Օր մը վերջ կը ճամբենք նաև դէպի Պոլիս մեր բախտաւոր աքսորակիցները և անկից յետոյ ամէն օր աւելի կ'անձկանան հորեղոնները մեր յոյսերուն և դամանութիւնը տակաւ կը բարդուի մեր զլիուն վերեւ: կը կարդանք կեսարիոյ պաշտօնաթիւնին մէջ հայ կախաղաններու վճիռները և ինքնախարէկութեամբ մեր անօգնականութիւնը կ'ուղենք պարակել մեր գիտակցութենէն:

Իսլամին ծոմապահութեան ամիսն է. մոլեռանդութիւնները ուռած են և ճշմարիտ հաւատագույն լրէմին նշաւակ պէտք է դառնայ կեավորը: Տեղահանութիւններու և ջարդերու զրոյցնեանել: Լեռացած դիակներու պատմութիւններ կը լսնք. ցեղային հնուազգացութիւնով՝ մեր հոգիններուն մէջ կ'ապրինք բոլոր խողխողումները մեր քոյլերուն և մեր եղայրներուն, որոնց արիւնը հեթանոսներու յայրատ բագինին վրայ թերեւ ողելնեցաւ:

Ծոմապահութեան յաջորդող հանդիսաւոր խրամանութեան օրերուն, ես ճանչցայ խորունկ թշուառութիւնը բացարձակապէս յուսամերժ հոգին: Էնկիւրի ջարդը կատարուած էր և մնք սեղեկացանք թէ մեղ ալ, խրամանութեան երգիտէինք պիտի հանեն... մնացած մարդս: վախճանական պաղարիւն կ'ընէ զրկեմ տուն, և կը մտածեմ բոլոր այն սիրելի բիլիններուս որոնց կ'երթամ միանալ ընդ միշտ: նութենէն դէպի քեզ երկնցող խանդակաթ ձեռատակ իրր մանուկ կամ իրր հակարտ պարմանի, կը կէ յաւիտենապէս չեն քալեր անօրէնութիւնն ու երկինքին վրայ նորագոյն, յաւիտենական յոյսեցիս բոլոր եղայրներն ու քոյրերը որ անպարլը վրայ ինկաք, հարկաւ ընդնշմարեցիք լոյսի տօնը որբացեալ Հայաստանը: ծնաւ յաւէտ

Անգիտական և Փրանսական գերիներ սկսած նոցը: Աքսորականներս և բնակիլ մեր լքած զօրագունի ակնարկներ և գերիները համակրանքի կանանք թէ իշխանութիւնք պատեհ միեւնոյն տեղին մէջ պատեհէն չեն գտած որ աքսորականներ գտնուին և թէ որոշուած է մնէ մէկը թողու Զանզըրը մէջ:

Պայրամի վաղայաջորդ օրը նորէն կառավարչատուն կը կանչուինք մնացած եօթանասունի չափ աքսորականներս : Չորս հոգի Պոլսոյ համար և քսանեւչորս հոգի Էնկիւրիի համար կը զատուինք մնէնէ : Գիտենք թէ այդ պահուն ջարդի մուտքը Էնկիւրիի մէջ կը փոթորկի կապանազերծ : Երկրորդ կարաւանն է որ կուտանք մնէ դափի և եղեանի ճամբաներուն, և որուն կ'ընկերանանք մինչեւ զօրանոցը և կը բաժնուինք իրենցմէ, յաւիտենականութեան յանձնելով զիրենք : Կեանքը հունաւոր գաղափարները կուտայ մարդուն, իսկ մահը յաւիտենականութիւնը կը ներչնչէ իրեն :

Կը վերադառնանք գէպի քաղաք : Ճամբան մնդի կը հայորդուի թէ նորէն պէտք է կառավարչատուն երթանք, մեր նկատմամբ զեկոյցինեղեկանալու համար: Երեսուն երկու հոգի ազատ կը հոչակուինք աքսորականի պարտադրութենէ, ամէն առաւօտ ներկայանալու, և իրաւունք կը արդուի մեղ Պոլիսէ զատ ու զած տեղերնիս բնակելու: Մեր համեմատական ազատագրումի ցնծութեան մէջ ցաւ մը կ'ըլլայ մեղ, աքսորական մեր վերջին հինդ ընկերները, որոնք զրկուած կը մնան մեղ արուած իրաւունքներէն, և որոնց համար կ'ըսուի թէ Այաշ պիտի փոխադրուին: Այդ հինդին մէջ ևն մեր յաւէտ սիրելի Վարուժանն ու Սեւակը :

Այս հինդը, Այաշ փոխադրուելու ճամբուն վրայ, Զանդըրէն վեց ժամ անդին, թիւնէյէն կէս ժամ դուրս կը մորթուին գիւղացիներու խմբակէ մը, կազմուած՝ իթթիհատի պատասխանատու քարտուղարին, ոստիկան-զինուորներու հրամանատարին նախաձեռնութեամբ և թուրք հրոսի մը գործակցութեամբ: Վերջէն կը տեղեկանանք թէ այս հինդին Այաշ ճամբայ հանուած ատենը, մեր միւս ընկերները դադրած էին արդէն Այաշի մէջ ըլլալէ :

Այս եղեռնը իր հիմերէն կը սարսէ մեր հոգիները և այն պուտ մը քաջութիւնը որուն ապաւինած պիտի բաժնուէինք Զանդըրի անհրապոյր հորիզոններէն, կը սառի մեր երակներուն մէջ և կը կարկամին մեր ոտքերը :

Ամբողջ երկու ք ու կէս ամիս հասնում մը

կ'ըլլայ կեանքս Զանդըրը մէջ: Ահ, որքան մեծ կարօտով կը ցանկամ երկաթի ճամբաներուն որոնցմէ՝ կառքով երկու օր հեռու, ապիկարութեանս յուսահատութիւնը կուլամ ամէն լուսնի: Լուսինը Անատօլուի կառուղիներուն վրայ բարիքն է տիսուր ճամբորդին, աշնանավերջի կարճ օրերուն:

Այս միջոցներուն է որ Էնկիւրիի փոխ-կուսակալը՝ ոճրագործ Աթըր, կուսակալ կը նշանակուի Քասթամունիի հայասէր Ռէշիտ փաշայի տեղ, որ հակառակ կեզրոնի հրամանին՝ վիլայէթին հայերը տեղահան չէր ըրած: Աթըր կուսակալի իր ապերասն և չարագուշակ հասակը կուգայ պտացնել Զանդըրի մէջ, անցնելով անկից Քասթամունի՝ կուսակալանիստ քաղաքը: Իր երեւոյթը կը պատմէ արդէն թէ տէրն է գործած անսահման եղեռնին և թէ կոպերուն տակ արիւնի նոր մարմացներ կան թառած, այնքան ատելավառ է իր նայուածքին, խօսուածքին և շարժուձեւին մէջ, մեզի հանդէպ:

Ալ տուած եմ մեծ որոշումս, պէտք է խորտակել Զանդըրէն մինչեւ Էնկիւրի մեր յուսահատութիւնը կոսող լեռներու ապալեր շղթաները և անհամբոյը հորիզոնները, պէտք է փախչիլ եղեռնը դարբնողէն, որ հիմա Քասթեմունի նսասած, իր ուղեղի գեհենին մէջ ոճիրին սալը կը կոփէ: Ա՛ն առաջին նշանը կուտայ արդէն իր գոյութեան: Պոյապատցի՝ եօթանասունի չափ գեղջուկ հայեր, կ'անցնին Զանդըրէն հետիոտն, հեծեալ սատիկան զինուորէն խարազանակից և կ'երթան գէպի Էնկիւրի. Կարաւանին մէջ, սպիտակափառ մօրուքով, ութսունամենի նահապես մըն ալ կայ, առ յաւէտ զրկուած արեւի լոյսի բարիքէն, և որ ձեռքի ցուպին և քովի բաղդակից ընկերոջ բազուկին անձնատուր, լեռներէ լեռ, հորիզոններէ հորիզոն քալելու առասպանքը կ'ապրի:

Իրերու անյեղլիութեան մէջ, տրուած է եղերինձ պրծիլ վերահաս եղեռնէն, և աշնանավերջի առաւօտ մը, ուրիշ ութը ընկերներու հետ ճամբայ կ'ինամ գէպի Էնկիւրի, ետիս ձգած քսանի չափ բաղդակից ընկերներ և տեղույն 60-70 տունէ բաղկացած աշխատասէր և պարկեշտ հայութիւնը:

ՄԻՐԱՅԻ, ՇԱՄՑԱՆՁԵՍՆ





Ո. ՌԱՍՏՈՒՐ

## ՄԵԾ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ

↔ ↔ ↔

Անմոռանալի ընկերներու համար մեր հոգիներուն արցունքները հազիւ գաղրած, երբ անոնց յիշատակը մեր սիրահերուն մէջ կը քանդակէինք, ուրիշ աստղեր կը մարին հայկական հորիզոնին վրայէն, անհուն պարապ մը ձգելով իրենց ետեւ . . . :

Մահուան գաղափարին հետ շա'տ դիւրաւ հաշտուիլ գիտենք: Վայրկենական ցնցում մը, մարմին սարսուռ մը և հոգեկան գող մը զգալով, ստոյիկեան փիլիսոփայութիւնով մը, մահուան ընական երեսոյթին հետ կ'ընտելանանք: Ու մեր միտքէն կ'անցնի մեզմէ յաւէտ բաժնուողներուն ուրուանկարը, անոնց հոգիին հայելին, միտքի պայծառութիւնը ու սիրտի առաքինութիւնները: Կը տարուինք անոնցմով, կը հետեւինք անոնց կեանքի ուղիին, ու կանգ կ'առնենք հանգրուաներու առջեւ, ուր պահ մը մեր ցաւատանջ իմացականութիւնը անդորրութեան յաճախանքը վայելել կ'ուզէ:

Քրիստափորներուն եւ Զաւարեաններուն վերջին սերունդն է, որ ատրիներուն անխոնջ ու հաւատարիմ գործակցութիւնէ մը, կամաւոր սպասումէ մը վերջ, կը բաժնուի իր այնքան սրտակից գաղափարակիցներէն:

Քեթերաններու սերունդին երրորդութիւնը թանկագին Ռոստոմք կը կազմէր:

Համեստ, թաքուն, առեղծուածային ու անմեկնելի հողի մը:

Շա'տ քիչ յեղափոխանաններ կրցեր են այնքան ներդործութիւն ունենալ, որքան Ռոստոմ:

Պայծառ ու իմացական դիմազծութիւն մը, խորաթափանց աչքեր և լայն ճակատ մը, որուն ետեւ անդունդներ ու վիճեր բացուած էին: Զար-

գացած զանկ մը, ուր՝ տեղ կը բռնէին, գիտութեան նորագոյն տուեակները:

Յեղափոխականի մաքուր հոգի մըն էր, որ ներշնչել գիտէր:

Բոլորը իրեն կը դիմէին, Ռազմիկը, Գործիչը, Մշակը, Ռւսուցիչը, Մտաւորականն ու Բանուորը: Անիկա բոլորին խորհրդատուն էր: Կը թելադրէր, կը հրահրէր, կ'ոգեւորէր, կը սորվեցնէր, կը քարոզէր, կը կազմակերպէր ու կը մարդէր: Յոզնիլ չէր գիտեր, հանգչի չէր սիրեր:

Յեղիս տառապանքը իր ճակարին գրոշմուած էր: Խնդումի և ուրախութեան պահերը հազուադէպ էին անոր համար: Վիշտ մը, անհուն ու ծանր, կը ճնշէր բովանդակ էութիւնը: անլուծելի հանելուկի մը առջեւը ինքզինքը զգացողի մը պէս կը տանջուէր հանելուկին գաղանիքը լուծելու համար:

Իր դատումներուն մէջ արմատական մըն էր միշտ և թուատոյական դպրոցին փիլիսոփայութեան աշխարհայեացքին կ'աշակերտէր, իրարու հետ հաշտեցնելով յեղափոխութիւն և թօւատոյական գաղափարները:

Ռուս յեղափոխական շրջաններուն մէջ ապրած ու այդ միջավայրին վարդապետութիւններով մնած՝ երբ իր գաղափարակիցներուն հետ համախորհուրդ՝ յեղափոխական դպրոց մը կը հիմնէր, անոր կուտար իր սիրտին ու միտքին թանկագին ծաղիկները, իր իսկ ստեղծած կուսակցութեան զարգացման փուլերուն հետեւեցով:

Ամերով քառորդ դար մը իր մեծ երազին համար տքնելով, երբ առաջին ցոլքերը կամար կը կապէին սարերուն կատարները, սրտի և հոգիի ցնծութեամբ անշուշտ ունկնդրեց հայուն սդաւոր երգը և հայ Ռազմիկին սուրերուն շաշիւնը, որ տին սիրգերով բեռնաւոր՝ կ'երթար մեծ իյնողներէ:

Հայ Բանթէռնին մէջ թանկագին Հայ մըն ալ կ'երթայ հանգչիլ:

Թող բարձրանան հակայ սիւները այդ անմահներու Տաճարին, որպէսզի վալը, գունդագունդ թեան համար իրենց քրտինքը, արիւնն ու արցունքը կէ տակաւին իր ճամբան՝ գաղափարներու աշխար-

ՄԱՐՏԻՐՈ ՊԱՐԵՍԱՄԵՍԱՆ



## ԵՏ ԴԱՐՁԻՐ, ԵՏ...

ո-ոստուր ին համար

Զեր սիրեցը որպէս խարոյկ հրդեհեցէք այս գիշեր, ո՞վ պայմարի եւ ուխտի եղբայրներ .  
Ու խոռվեալ նակասներդ գիշերական պաղ խաւարներուն՝ ձեր մահողոյնքը աստերուն բուրլառեցէք,  
Մահը իր մեծագոյն աւարը կը խիկ կամի հերոսութենեն, մեր եօրինը անողորմորէն դաշունահարած.  
Արեւաչու կիսասուածը իր հողը կը մերկանայ, մօսեցուցէք ձեր հոգիներուն շրունեները պատարագեալին...

Ո՞վ Ռոստու, ո՞վ հայր եւ հայրուրին, ո՞վ երեց եղբայր առնակորով, ո՞վ ահազնամոռունչը մայր-հողին,  
Եւ ի՞նչպէս քու մահանջատդ եղերեզեմ, երբ կայուրինդ մեր արեւողն էր, մեր գափնին յաղբանակին,  
Դուն, կամք եւ ահազնուրին, դուն, զաղափար եւ պատարագում իմացական, դուն գոյապատճառ,  
Ե՞ս դարձիր, ե՞ս, դուն մեզի պէտք ես, արգարութեամ չափ, հայրենիքին չափ, կեանին չափ . . .

Մեր հոգիներուն բգետուած ամայուրեանը վրայ, սա մարդեղացումներու լուսափառ օրերուն,  
Յոյսին մարգարտաղկունքը հազի ծլած, դուն մեզի կը լիս երազի մը հանգոյն եօրնահսկայ,  
Դուն մեր երեկին ցուլը մահատեաց ու այսօրին երմապետը մեհենական փառակորող բազիներուն,  
Դուն մեծ սերմացանը զաղափարին եւ ունչն ու նպատակը ամեն առնապայշարներուն վսեմ :

Մեզի սուզին սեւ ամպրոպներովը կը պարուես, ո՞վ դուն անջրպետուող լուսատու մեծուրին,  
Դուն խոյանի անդիմադրելի եւ իմաստուրին կուռ, ու դարաւշչաններու հուր մարգարէ,  
Մեծ կսկիծներու անյատակ ընդունարան եւ դարբնոց հսկայակեր իրաւամարտի խորհուրդներուն,  
Դուն վկայուրին անհերելի զաղափարին յաղբանակող, դուն պատգամախօս իրաւունքին տարամերժ.

Դուն ուժ եւ զօրուրին անսպառելի եւ ծիրանի ցայտալիքիւր առաքինուրեանց անսովորական,  
Կատար մատումի եւ սիրս ովկեանական տարածուրեանց ու խորուրեանց անխուզարկ .  
Դուն պասկաղիրդ հերոսուրեանց եւ պատմունան ծաղկեայ եղկելի մերկուրեանց թուլառ,  
Դուն դրօշը ուխտին եւ արու խօսքը աւերականուեր ոռումբերուն լուսահրդեն . . .

Եւ դարձեալ դուն խաղաղուրին անխոռվելի եւ շրջապարիսպ սարսափներուն ազգի ազգի ,  
Ընդդիմադիր նակաս փորուկարմիւր եւ բռունցք զարհուրելի ու շանրավեծ ժամին ցասումիս արդար,  
Դուն արեւածին արօրող պապամները խաւարին ու ստրկուրեան, դուն անբասիր եւ անխոնչ մշակ,  
Դուն հայ Պռօմերեսուր անմահ, նելլետական սարերուն ի պահ ատրոււանին հայկազն . . .

Եւ սակայն ինչպէս կը բռուս մեզի, հայր, վրեժիս վարդենիքը՝ կոկոնները կ'արձակեն ,  
Ու ահաւոր ժամը հաւուեյարգարիս կը մօսենայ, ինչպէս այզը խաւարներէն յետոյ,  
Ամեն բռունցք երդուեալ կը պատրաստի երախակալ մը ընդունելու, ինչպէս ամեն խիղն զրահ,  
Ու հեռու չե՛ այլեւս օրերուն օրը, հայր, երբ բաժակները արինը պիտի մատրոււակես զաւակներուդ...

Եւ բաել և բե՛ դուն մեզի հետ չպիտի րլլաս . . . Բայց հնա՞ր և սա եւ հնարաւոր . . .  
Ինչպէս մենի փառքին սեղանը նսինեք առանց եեզի, կարելի՞ և ցորեկը առանց արեւին ,  
Գերազոյն հաշիւր որո՞ւն պիտի ներկայացնէ իր անսահման դեզերը վրեժի հունձքերուն,  
Ու մեր նակասները այրի՞ պիտի մնան քու համբոյիդ միւռոննեն հայրական ու հայրենական . . .

Բայց մենի եեզի, հայր, մեր զինեալ բազուկներով վրիմայագուրդ եւ հպարտուն ուսամբարձ,  
Որպէս օգոստափառ կեսար մը հզօր զաղափարին պիտի առաջնորդին տանարը անկախուրեան,  
Ու դուն, հո՞ն, որպէս կենդանի Աստուած մը բազմաստուածեան խորանին եւ զագար մը զագարներուն  
առընթեր ,  
Նոր դարաւշանը հայ անունով պիտի ողջունեկիր բազուկներդ եղբայրուն ազաս ազգերուն կարկառած...

Ե՞ս դարձիր, հայր, ե՞ս, զեր շարքի մը համար վրիմաբոսոր առօլոյսներու վաղորդական ,  
Անապատներէն ուխտաւորներ կան հայուածքդ հանգրուան հանգրուան մոլեռնդորէն մուրացող ,  
Ինչպէս որ մոխրներէն ու դիսկակոյտէրէ զինեալ բազուկներ ցցուն հրամանատարուրեանդ ծարաւի .  
Ե՞ս դարձիր, հայր, ե՞ս, հայրենիքն և որ մեզի հետ եեզի կը կանչէ իր եօրնաւերակ բերաններով . . .

Ա.ՐԱ.Մ Վ.Տ.Մ.ՐԱ.Ն.Դ.Ի

## ԼԵԶՈՒԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Յարգեղի խմբագիր «Շանք»ի.

Ազնուութիւնն ունեցած էիք հրատարակելու ձեր թերթին մէջ երկառող գրութիւնս, որուն համար չնորհակալութիւնս յայտնելով հանդերձ, պիտի փափաքէի որ տպած չըլլայիք. որովհետեւ ահագին փոթորիկ մը պայմեցուց զիխուս, երկու ամիս «Սպանախտ»ի ճապուռներուն մէջ թալթալ խաղալէ վերջ, (Սպանախտ, բառ մը որ թէ ծագումը կը ցուցնէ, և թէ՝ աւերիչ վերը, որուն քիչ մնաց մենք ալ զո՞ն կ'երթայինք, եթէ... բայց այս «եթէ»ն թող այսպէս կախակայեալ մնայ), ուրեմն, կ'ըսեմ, երկու ամիս այդ Սպանախտին ճանկերուն մէջ տոշկուելէ վերջ երբ առաջին անգամ աշակերտներուն կը ներկայանամ, սպասելով անշուշտ անոնց կողմէն «անցեալ ըլլայ»ի մը, աղմուկ մը կը լսեմ, ժխոր մը, խզուըրտիւն մը խըռապոտ, խաղտախուղտ, խափարաձայն... մէկը կ'ըսէ. «Նախ առնել և ապա ուսուցանել», ուրիշ մը. «Քժիշկ, բժշկեա զանձն քո». կ'ապշիմ կը մնամ... կ'աղաջնմ որ աղմուկը դադրի, և խելացիներէն մէկուն կը հարցնեմ պատճառն այն բոշով չմորին: Ան՝ շիկնելով, շառագուռնելով կ'ըսէ. «Վարդապետ, դուք տարին տասներկու ամիս զլուխնիս արդուկեցիք ու կ'արդուկեք «Կօթերորդ չէ, «Կօթներորդ», մանաւանդ թուական ածականներու դասին, քսան անգամ համրել տալով մէկէն մինչեւ տասը: Եւ արդ դուք «Շանթ»ի մէջ (թ. 11) «Կօթերորդ» էք գրեր: — Բնական է, փութով կը բացատրենք իրենց թէ մենք այդպէս գրած չէինք, թէ մեր գրութեան առաջին տողերը փոփոխութեան ենթարկուած էին, և մեր բացարձակ թուական 7՝ դասականի վերածուեր էր: — Կը հանդարտին, և ես իսկոյն կը հարցնեմ նոյն աշակերտին որ ըսէ թէ ի՞նչ բանի մը մէջ կը կայանայ «Կօթերորդ»ին սիմալը: — «Կօթներորդ» պիտի ըլլայ, կ'ըսէ, վասնդի բառը «Կօթն» է. և հայ լեզուի օրէնքներէն է որ բարդութեանց ատեն արմատին նու գիրը անպատճառ երեւան կ'ելլէ: Աշխարհաբարի մէջ կ'ըսենք «Պուռ, բեռ, ձուկ» ևն. բայց բարդութեանց մէջ կ'ըսենք, «Ըլոնապան», բեռնակիր, ձկնորս»: որովհետեւ «Պուռն», բեռն, ձուկն» են բուն ձեւերը: «Կօթն» է բառը, որմէ «Կօթանասուն»: մինչեւ ութը՝ որ նու չունի՝ կ'ըլլայ «ութսուն»: ինն՝ «իննսուն», (ականջը խօսի մեր վահան Եարձաննեանին, որ «իննուսուն» նոր ձեւ մը ստեղծեր էր, անշուշտ չհաւնելով եղածին): — Այս կանոնին իրը զանցառութիւն ունինք «անձնուէր» բառը, ուր «անձն»ին նուն ջնջուած է, մինչդեռ պէտք էր ըլլար «անձնանուսուէր», ինչպէս կ'ըսենք անձնասէր, անձնահամ, անձնագով», ևն.:

— Լա՛ւ, կը պատասխանեմ: Յուշատերիս մէջ մեր թերթերէն քաղուած քանի մը բառեր ունիմ, տեսնենք, պիտի կարենա՞ս անոնց ձիշը ըսել: Նախ՝ ըսենք որ մեր հայերէն թերթերը

շատ անխնամ կը պատրաստուին. քերականական, ուղղագրական և տպագրական սխալները կը վշիսան, և ամչնալով պիտի բանմ՝ որ Պոլսոյ մէջ չկայ գուցէ ազդ մը՝ որուն լրագրողներն այնքան անփոյթ ըլլան իրենց լեզուին, որքան մենք մերինին: Ըսածներս զրագրատութիւն չեն, օրինակներ պիտի տամ: Առէք որեիցէ թերթ մը, և պիտի տեսնէք նոյն յօդուածին մէջ «երբեք» և «երբէք» ձեւերը, «բաղդ և բախտ» գրութիւնները: Բայց մինչեւ ե՞րբ ճիշդ միօրինակութիւնը պիտի չտիրապետէ. «Երբեք»ը գեռ կարելի՞ է «Երբէք» սխալ ձեւով գրել: — Ունինք «ուր, ուստ, երբ» բառերը, որոնցմէ «ուրեք, ուստեք, երբեք» և «ուրեմն, ուստեմն, երբեմն» բառերը: Արդ, ո՞ր հայկաբանը կրնայ ցուցնել «ուստեք» մը կամ «ուրեք» մը և ով գրուած, և եթէ անսնք չեն գըրուիր «Երբեք»ը ինչո՞ւ և ով պիտի գրուի: — «Բաղդ»ը սխալ է, և այդ սխալն ալ առաջ ևկած է «բաղդատել» բայէն. բայց հոս «բաղդատել»ին «բաղ»ը մասնիկ մըն է, ինչպէս «բաղկանալ», «բաղհւատութիւն», ևն.։ Մեր լեզուին մէջ ոյ իւրառ քով գրեթէ չի գար. ունինք «իւեղդ» բառը. «յողդողդ»ին մէջ «դող»ի կրկնութիւնն է: Դէն վերջ և թ կու գայ. «աղտ, ուղտ. մաղմել, յաղթել, գաղթել», ևն., ևն.:

Թողունք ասոնք բախտ բառը պարսկերէն համարինք, ըստ տառագարձութեան օրէնքին կ'ելլէ «բախտ» և ոչ «բաղդ». առնենք մէկ երկու ուրիշ բառեր «Նայ դիւան», «Ճադ դանակ, յա դեւ», կը տեսնենք որ ձ գիրը դ-ի փոխուած է, շ գիրը, ինչպէս եւրոպական և միշտ և է հին օրէնքով, որով ուր ալ դառնայ «բաղդ»ը, գըժրախտ բառ մըն է. և պէտք չէ զոյութիւն ունենայ այդ սխալ ձեւով, բոլոր ածանցումներով:

— «Փողով. Զայն» թիւ 19, «ցցուց» բայը կար. ճիշտ է. — Ո՞չ: Այդ բային արմատն է «ցոյց»: տարրական օրէնք է որ «ոյ» կը փոխուի «ու»: Ինչպէս «լոյս, գոյն, յոյս», «լուսաւոր, գունաւոր, յոսալ»: և ոչ թէ «լսաւոր, զնաւոր, յաւոր»: որով պէտք էր ըսել «ցուցուց»: իսկ եթէ անախորժ թուի այս ձեւը գործածողին նուրբ աշկանջին՝ կրնայ «ցոյց տուաւ» գործածել: — Նոյն թիւին մէջ կայ «կ'անջնէիր» բայը «կ'անցընէիր»ի իմաստով. լաւագոյն չ'ըլլար որ մեր զրողները «անցնիլ և անցընել բայերուն ուշ գնէին, շփոթութեան տեղի չտալու համար. «անցնիլ»ը «անցանել»ն է, իսկ «անցընել»ը «անցուցանել», անցողական, իմաստի անազին տարբերութեամբ: — Նոյն թիւին մէջ «կնդրուք» և «կընդրուկ» տեղ, «սբինքս», «սփինքս»ի տեղ: — «կը գրեն մեր թերթերը. լաւագոյն է «իսուժդուժ» գրել: նոյնպէս «խուժագուժ» սղումը ընելու է «խժդժականան», «խժդժութիւն», ևն., բաղմականկերուն մէջ, ինչպէս ըրած են նախնիք: «Ժողովուրդի ձայն»ին

թ. 6-84ին մէջ «դառցած» այլանդակ բառը կար. նախակրթարանի տղոց չարագրութեանց մէջ կը հանդիպինք այսպիսի սխաներու. և մարդ դայրոյթէն կը քրտնի կոկիկ ուղղութիւնով ու սիրուած թերթի մը մէջ այդ խմբագրութիւնները տեսնելով, և կ'ըսէ ինքնիրեն. լաւագոյն պիտի չըլւար արդեօք որ յարդ. խմբագրութիւնը քիչ մը աւելի ուշ գնէր ասոնց, փոխանակ անմեղ ո գիրը չկօթակ ընելու իր սիւներէն։ Մեր լեզուն ալ՝ կ'երեւի՝ մեր աղգին պէս դժբախտ, ունի ճակատագիր. այս ո՛քան հալածանք. Ռուսինեաններէն սկսեալ մինչեւ օրս, քանիներ յօշտեր, ձրձեր, ցրցտեր են։ Բայց այս անգամ հալածիչները մենք իսկ ենք։ Անչուշտ այս հերձուածն ալ հիներուն բախտին պիտի արժանանայ. և արժան և իրաւ. որովհետեւ անհատ մը՝ հեղինակաւոր իսկ ըլլայ՝ ինչ իրաւունք ունի լեզուի մը մէջ սխաներ ներմուծելու. կրնանք ո գիրը վտարողին մէկ ականջը խզտել փրցնել՝ մէկ հա՛տն ալ կրնայ լսել ըսելով։ Ո՛քան կարեւոր է այդ ականջը, այնքան կարեւոր է ո գիրն իր տեղը։ Ի՞նչքան լաւ գործ ըրած պիտի ըլլար «Ժողովուրդի ձայն»ը (թ. 7—85) «կառավարութիւնը չգիտե՞ր» բարբարոս ձեւին ուղիղը եթէ գտնելու աշխատած ըլլար, քան այդ անհարկի վտարանդումը։ Մենք կ'ըսենք. «կառավարութիւնը չի գիտեր», և այդպէս ալ կ'արտասանենք, ինչպէս լեզուն բացուած որ և է հայ տղայ։ Դեռ չկրցան մեր գրողներն հասկնալ որ ժխտական ներկան երբ էական բայով լծորդուած է, «չեմ բերեր, չես բերեր, չի բերեր», երրորդ դէմքը անգատնառ չի կամ չ' (երբ ձայնաւորի հանդիպի) կ'ըլլայ. «չի բերեր, չուզեր», պատճառը կայ, բայց արդէն յօդուածու երկարեցաւ, ընթերցողներն ալչյոզնեցնենք։ Թէ ոչ՝ արմատացած սխալ մըն է այս մխտականի ինդիրը, և առանձին յօդուածի արժանի է։ Նոյն թիւին մէջ կայ «Ճնկաչոք» խառնագաղանը. արդեօք կարելի չէ «Ճնրադիր» ըսել. այդ ոճով սկսինք գրել «պալիսճիւթիւն, դաստապութիւն» ևն։ «Ճակատամարտ»ի մէջ (թ. 57) «մոխիրներէն յառնած» ցուցանքը կար։ Եթէ այս ոճով տառչ երթայ մեր լրագրութիւնը, յիսուն տարի վերջ պիտի չճանչնանք լեզունիս։ Բայց մը անցեալ ընդունելութիւնը կը շինուի կատարեալէն. զարտուղի բայ

մըն է յառնել, ինչպէս առնել (ընել). վերջինս աշխարհաբարի մէջ եղած է «այնել, անել, ընել». կատարեալն է արարի=ըրի, անց . ընդ . արարեալ=ըրած, և ոչ «ընած»։ յառնել, յարեայ, յարուցեալ։ Արդեօք մեղք պիտի ըլլար եթէ ըսուէր «մոխիրներէն յարուցեալ», քանի որ նոյն յօդուածին մէջ «կոչեցեալ»ները գործածեր է գըրողը, և արդէն չէ որ Հայ Եկեղեցին ամէն կիրակի, և Յինանց մէջ ամէն օր կը լծորդէ «յառնել» բայց. և ո՞ր Հայուն՝ ըլլայ իսկ անուս անծանօթ կրնան ըլլալ «յարեաւ, յարուցեալ» բայցերը, երբ ամէն կիրակի իւղարերից աւետարանը կարգացուած միջոցին, անմիջապէս որ լսէ «յարեաւ» բայց՝ «Օրնեալ է Աստուած»ը կը կպցնէ Մէկ խօսքով՝ «յառնել» բային անց . ընդ . ը չի կրնար «յառնած» այլանդակութեամբ արտայայտուիլ. ինչպէս չենք կրնար «դառնալ, դառնած», «ուտել՝ ուտած, ընթեռնուլ՝ ընթեռնած, առնել (առնուլ) առնած», «ևն, ևն, ըսել. այլ անոնց կատարեալէն կը շինենք. «դարձած, կերած, ընթերցած, առած», «ևն . : Եթէ «յարուցեալ» չ'ուզուիր, «յարութիւն առած» թող բաէր, կամ վերապրած, ևն : Նոյն թերթին մէջ (թ. 55-59) քանիցս «վիրահայ գործածուած էր. հայ վիրաւորող ըսել կ'ուզուի արդեօք։ Այդ խէզ աղզը «Վիրք» կը կոչուէր, ուրկէ «վրացի» «վրացերէն», «վրաստան» . տարրական կանոնով «զիր, զրել, «միտք, մտածել», ի գիրը ը ի փոխուած. որով պէտք է ըլլայ «վըրահայ. «վէրք» բառն է որ «վիրաւոր» կ'ըլլայ. որովհետեւ և գիրը ի-ի կը փոխուի, ևն, ևն :

Հունձքը խիստ շատ է, և եթէ մէկ երկութերթերու մասին միայն կը խօսիմ, պատճառը թերթերուն միշտ դէպի վերաբարձրանալն է, որոնց համանելու համար երկայնաբազուկ պէտք է ըլլալ, ինչ որ չեմ դժբախտաբար։

«Ճանթ»ի վերջընթեր թիւին մէջ մեր անմուռանալի Հրանդին գրաբար մէկ նամակը կար։ Մէջը սխաներ սպրդած էին. կ'երեւի թերթը մեքենային մէջ փորձանքի հանդիպած է։ Ուշ գընենիդ կը խնդրուի, թէ ոչ՝ ուրիշ անգամ Զերթերթին մէջ զջեղ պիտի հարուածեմ։ Նպատակս է՝ օգատակար ըլլալ. որով և ոչ ոք պէտք է զայրագնի։

Հ. ԱՐՍԵԿ Դ. Ա. ԶԱԿԱՐՅԱՆ



## Հ Ի Ն Ս Է Ր

Նոր չեմ սիրեր քեզ. պէտք է դուն գիտնաս,  
Որ երբ իտկալն իմ մէջ հասունցաւ,  
Քեզի նըմանօղ կին մը թրիավարս,  
Տարիներ առաջ միտքիս տիրացաւ,  
Ու կախարդեց զիս. կապոյն Թէնիւուս :

Սիրեցի այդ կինն՝ երբ դեռ անգոյ էր . . . :  
Պէտք է դուն գիտնաս, քեզ նոր չեմ սիրեր.

## Զ Ե Մ Յ Ի Շ Ե Ր



Գիշեր մըն էր, կուրծքիս վրայ զայն երբոր,  
Կը սեղմէի քաղցրօքէն,  
Իբրեւ թէ ան գարունն ըլլար մշկաբոր,  
Կամ արշալոյսն հրեղէն :

Թեւերուս մէջ, յուզումով մը կենսաբաղձ,  
Կ'օրօքէի ան գիշեր,  
Իբրեւ թէ ան երջանկուրիւնն ըլլար, բայց  
Ի՞նչ էր, ո՞վ էր, չեմ յիշեր:



## ԿԻՆ ՄԸՆ Է ԱՆՑԵՐ . . .



Սիրտիս մէջ կ'իջնէ սուզն ամայուրեան,  
Ինչպէս քանդրւած քաղաքին վըրայ.  
Եւ անյուսօքէն մռայլ, անկենդան,  
Հոն աւերներու ոգին կը սուրայ . . . :


Անիծուած վայրն է, տըխուր եւ ունայն,  
Ուր կեանիք շունչը սառոյց է դարձեր,  
Եւ ուր կը յածի լոկ շուքը մահուան :

. . . Իմ սիրտիս մէջէն կին մըն է անցեր :

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍՄԱՆ



## ԳԵՂԱՄԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Նախճիրի ահաւոր օրերուն, հէ՛ք գեղամ, գլխիկդ ծուռ, տժգոյն շրմունքներդ դառնութեան ամենէն լեղի բաժակին մէջ թաթսած, աչքերդ արցունքով լեցուն, Հայրենիքիդ աւերակներուն վրայ կ'ողբերգէիր :

Առառու մը գուժկան բուն դարձեր էիր, դո՛ւն, Մուշի քա՛զը պլպուլը. ծունկերդ դողդղալով, այցի եկար ինձի, դէշ խապը բիներ բերիր քու անուշիկ հայրենիքիդ մասին, ըսիր թէ բոլոր Հայութիւնը ջարդուեր, տղաքը խողխողուեր էին, ամէնքն ալ, ափսո՞ս, ամէնքն ալ մահացուցեր ու աւերակ, քար ու քանդ ըբեր էին երկիրդ, ու եկեղեցիդ . . .

Հայրենի երդիքիդ ցաւը պղտիկ էր այն միւս մեծ ցաւիդ քով. Ա. Կարապետի վանքը և ներքին գաւիթը, ամէն բան խլած, յափշտակած, կործանած էին. և հնութիւնները . . .

Աչքիս առջեւ ունիմ ցաւագին պատկերդ, երբ կ'արտայայտուէիր թէ Ատանայի ջարդէն վերջ կասկածներ ունենալով հայրենիքիդ մասին, առաջարկեր էիր թանկագին հնութիւնները Բարիզ փոխադրել, այն հնութիւնները որոնց համար կը յոխորտայիր, կը փառաւորուէիր, հարստութիւնները այդ սուրբ տեղերուն, զորս նկարագրելու համար անշուք կը գտնէիր ամենէն շողջողուն բառդդ, դո՛ւն, Հայաստանի հոգին, այնքան համեստ ու աշնչքան խոնարհ :

Հէ՛ք գեղամ, ինչպէս լացիր առառու մը թէ Հայութիւն չմնաց այլուս, և ինչպէս յուսահատ էիր Հայուն ճակատագիրին մասին: Հայաստանի հողերուն վրայ ծլած ու տերու զաւակ, կը տկարանայիր շատ անջանայի ներշնչել քեզի: Որովհետեւ չէի հաթիւնը չի կրնար վերականգնիլ:

— Չէ, կըսէի քեզի. մեր վրայ յոյս չեմ գներ, մենք պոլսեցի Հայերս թոյլ ու մեղի կիմայի տակ ապրած, վոսբորի ու Մարմարայի կապոյտ ջուրերուն վուճ երազ կրնար ընել. իսկ դո՛ւք, գաւառի հայերդ,

առողջ լեռներու հսկայ առիւծներ, կոչուած  
էք Հայուն անունը յաւէրժացնել.

Այն ատեն չէի կրնար հաւատալ այս  
օրուան իրադարձութեան, բայց վատահ էի  
որ Հայուն անունը չպիտի վերնար տիեզերքի  
պատմութեան մէջէն. տարագրութիւններու  
մէջ ծլած պղտիկ ընձիւ զները անտառներու  
պէս կրնային ուռճանալ. գեռ կային կովկասի  
Հայերը. ճանչյած էի անոնց մէջ անհատ-  
ներ, որոնց կորովը և հայկական հոգին բա-  
ւական էին ամբողջ հայ սերունդներ ստեղ-  
ծելու: Կը յիշէի քեզի, Ամերիկայի Հայու-  
թիւնը, և մենք Պոլսեցիքս, մեր ահաւոր  
վրէժխնդրութեան ոգիով պիտի չենցնէինք  
և գեղազարդէինք Հայաստանի հողերը:

Վարանոտ էիր այն ատեն, կը դողակիր  
Պոլսոյ Հայութեան մասին, կասկածը հա-  
ւատքդ կործանած էր. և բաներ մը կը  
կմկմայիր այդ օրերուն:

—Պիտի տեսնես թէ Պոլսի Հայերը ա-  
զատ պիտի ըլլան գաւառի Հայուն ճակա-  
տագրէն, կ'ըսէի քեզի դարձեալ. որովհե-  
տեւ Թուրքերը մեզմէ չեն վախնար, մենք  
կորով չունեցող մարդիկ ենք:

Ճիշդ ատիկա էր որ կը յուսահատեցնէր  
քեզի, անոր համար էր որ չէիր հաւատար  
Հայութեան վերածնունդին: Թուրքին միտ-  
քէն կ'անցնէ՞ր որ մեր ծոցը պիտի վերա-  
դառնան իր ճիրաններուն մէջ վիրաւոր հայ  
ծիլերը. բայց երբ շարան շարան ողողեցին  
որբերը եկեղեցիներու բակերը և դպրոցնե-  
րուն յարկերը, երբ եկան հասան Հայաս-  
տանի սիւները և վերաշնութեան դաղա-  
փարը դրապէս հաստատեցին, ափսոս որ,  
քու արեւդ մարելու մօտ էր արդէն և չի  
տեսար կասկածներուդ ցնդիլ:

Մեր թշնամիները թող կարծեն թէ Հա-  
յուն գլուխը ջախջախեցին: Թող աշխատին  
հայ տղան իրենց յարկերուն տակ պահելու  
փորձը շարունակել. ո՛չ, անոնք կապուած,  
փարած են իրենց հայրենի հողին . . . :

ԶՍ. ԵՐԵՎԱՆԻ ԳԱՅԱՆԻ ՄՐՑԵՍՐԵՍՆ

## ՀԱՅ ՀՈՐԻԶՈՆԵՆ

Հայ Մամուլի Միուրիւնը կազմուած.—Հ. Երես-  
եան եւ Տիգրան Երկար. — Արամ Վարանինի.  
Զենագիրներ, ձեռագիրներ. — Մեր նոր բայ-  
ջրզը. — Հայ Տումարիխական Ընկերութեան  
ներկայացումները. — Սեղանիկի համահայկա-  
կան պատուիրակը:

Շանթի Զրդ թիւով Հայ Մամուլի ընկերակ-  
ցութեան մը պէտքը չեշտած էինք: Անկէ վերջը  
գրողներ մասնակի գումարումներ ունեցան և ծրա-  
գիրը մշակեցին: Ուրախ ենք որ վերջապէս կազ-  
մուեցաւ այնքան կարեւոր այս միութիւնը, որ  
նպատակ ունի մասնաւորաբար բարձր բռնել Հայ  
Մամուլի վարկը, և Աղգ. դատին հետ առընչու-  
թիւն ունեցող կենսական կարեւոր ինդիրներու  
շուրջ համերաշխութիւն մը պահպանել:

Բնդ. Ժողովին, որ տեղի ունեցաւ Հայ. Ակում-  
բին մէջ Փետր. 1ին, ներկայ էին քսանէ աւելի  
Մամուլի ներկայացուցիչներ: Ծրագիրը կարդաց-  
ուելէ վերջը ընդհանուր ժողովի ատենապետ ըն-  
տրուեցաւ Պ. Եր. Օտեան և ատենապիր՝ Մեր.  
Պարսամեան: Խակ վարչական ժողովի անդամ ըն-  
տրուեցան Պ. Պ. Միք. Շամտանձեան, Ս. Սրենց,  
Տիգրան Ջաւէն, Յ. Ճ. Ա. Սիրունի, Ենովլք Արմէն,  
Հայկ Սէրէնկիւլեան և Տ. Չիթունի:

Վենետիկէն դեռ քանի մը օր առաջ ստաց-  
ուած հրատարակութեան մը մէջ կարդացինք Հ.

Ս. Երեմեանի՝ մեր  
բարեկամին ու աշխա-  
տակիցին, մէկ գեղե-  
ցիկ ուսումնասիրու-  
թիւնը. Տիգրան Եր-  
կաթի մասին: Տիգ-  
րան Երկաթ եղած է  
առաջին ռահվիրան հայ  
և յոյն եղբայրակցու-  
թիւն: Զենք կրնար  
գինքը չի յիշել ամէն

ատեն որ առիմը ներկայանայ: Մեր Երեւակայու-  
թեան մէջ կը գծուի այսօր դէմքը այն մեծ հայ-  
րենասէրին, որ հիմը  
զրաւ Աթէնքի մէջ,  
Վէնիզիլոսեան հայա-  
սիրութեան: Ակատա-  
եղիք որ Մ. Վէնիզէ  
լոս լաւ փաստեր հա-  
ւաքած է ձեր գատին  
համար, ըստ Զօրա-  
վար Տէսպէրէ, Պալիս  
ժամանումին յաջորդ-  
որը, իրեն ներկայա-  
ցող առաջին հայ պատուիրակութեան:



ՏԻԳՐԱՆ ԵՐԵՎԱՆԻ

Արամ Վարառանդի, որուն անմոռանալի Ռոս-  
տոմի ուղղած մէկ գեղեցիկ բանաստեղծութիւնը  
կը հրատարակենք այս թիւով, ծանօթ է Արամ

Զարըդ անունով։ Պոլսական մամուլին մէջ առաջնագամ Շանթն է որ ներկայացուցած է անորդործը (Շանթ, 1912 թիւ 19)։ Արամ Վատարանդի Անահիտի և Դրօշակի մէջ փորձած է զիւցազներգական այն սեռը, զոր յետոյ մշակնեցին Սիամանթօ, Վարուժան, Ահարոն և Հիմա կը շարունակէ Վահան Եարճանեան։ Շանթ առիթ պիտի ունենայ Վատարանդի նոր քերթուածներու մասին խօսելու առաջիկային։

Շանքի խմբագրատունը ողջողուած է ձեռագիրներով։ Բացի զամբիւղի գրուածքներէն, որոնց մասին աւելորդ է խօսիլ անշուշտ, մեր արամագրութեան տակ ունինք հրատարակելի բազմաթիւ արձակներ ու ոտանաւորներ։ Այդ ձեռագիրներուն սպասումը կը յուղէ մեզ պարզապիս։ Երբեմն, այժմէականութիւնը կը խանգարէ հրատարակութեան կարգը։ Բայց Շանքի խմբագրութիւնը կը խորհի թերթը երբեմն յաւելուածական էջերով հրատարակել, իր հին կամ նոր աշխատակիցներուն համբերութիւնը յորդել չի տալու համար։

**Սպասեցէ՞ք ուրիմն :**

Որոշած էինք Շանթի մրցումին համար ստաց-  
ուած քայլերգները կարգով հրատարակել։ Բայց  
հիմա յարմար կը դատենք մրցումին պայմանա-  
ժամը լրանալէն վերջը միայն հրապարակ հանել  
դանոնք։

Մասնակցողները պիտի կրնան կատարելազգործել իրենց գրածները, եթէ Կարդան իրենցինէն առաջ լոյս տեսնող քայլերգները :

Սրդ առաջիկային պիտի հրատարակենք լաւագոյն քայլերգները՝ անսուրազիր. խմբագրութիւնս միայն պիտի գիտնայ հեղինակներուն ինքնութիւնը. ընթերցողներուն դատաստանը ստանայէ վերջը, միտոյն իր որոշումը պիտի տայ:

Բոլոր մեր բանասկեղծները, — ամի, խանչի հաս-  
մեացին, — այս ազգային-գրական մերժումին մաս-  
նակցեն կը հրամիրեմ:

Հայ Տռամ. Բնկ. Թատերախումբը անցեալ  
կիրակի ցերեկ Փըթի Շանի մէջ ներկայացուց Ա-  
հարոնեանի՝ «Արցունքի Հովիտ»ը և գիշերը՝ Պ.  
Զօհրապի «Փոստալ»ը, Թատերախաղի վերած-  
ուած՝ Յ. Ճ. Ա. Սիրունիի կողմէ։ «Արցունքի հո-  
վիտ»ը իր ուժգնութեան մէջ երեւան չեկաւ։  
Խումբին կազմը շատ բան կը խոստանար։ Յա-  
ջող էին Տիկ. Քնար (Նազէ), Օր. Ալիքսանեան

(Ծողիկ), Ն. Պիշիկթաշլեան (Բարիկէն), Զափրաստ  
(Սուրէն) և Աժտէրեան (Ռէս Մնօ): «Ա.սլան»ի  
դերին մէջ Զանան մինակ մարմինով էր «Ա.սլան»:  
Դերասանապետ Մ. Մնակեան խնդթ «Զիննի»ի  
դերին մէջ տպաւորիչ էր, հակառակ իր յարգելի  
անյաջողութեան: Տիկ. Հրաչ կրնար լաւ «հիւրի»  
մը ըլլալ՝ եթէ քիչ մը աւելի լաւ մտնէր այդ յե-  
զափոխական հայուհիին հոգիին մէջ: Տիկ. Ալիք-  
սանեան ալ կրնար լաւ «Փէրի» մը ըլլալ, եթէ քիչ  
մը աւելի աշխատէր:

Գիշերուան ներկայացումը անցաւ աւելի յա-  
ջող : Ներկայացումէն առաջ ծանօթ իրաւագէտ  
Պ. Հմայեակ Խոսրովիեան գեղեցկօրէն պատկերա-  
ցուց Զօհրապի բազմակողմանի տաղանդը, ի վեր  
հանելով մասնաւորապէս իրաւաբանը, և հոգ  
գտնելով Զօհրապի իսկական կոչումը :

Պ. Զօհրապի «Փոսթալ»՝ կարելի է ըստ թէ՝  
յաջողապէս վերածուած է թատերախաղի։ Միայն  
վերջին պատկերն էր որ տպաւորութիւնը խան-  
գարեց։ Յաջող էին գրեթէ բոլոր դերասանները,  
մանաւանդ Տիկ. Զապէլ որ անձնաւորեց միջնորդ  
Տիրիւկ հանըմի դերը։ Զափրաստ իր դերին մէջ  
էր կատարելապէս։ Միայն հնարքը առաջ էր մասնաւոր գործութիւնը։

Ներկայացումնէն վերջը կովկասի Հայ Տրամա-  
թիք դերասաններէն Սարհան արտասանեց Ա. Զօ-  
պանեանի «Մայր Հայաստան»ը։ Սարեանի արտա-  
սանութիւնը թէեւ զգայուն, բայց միօրինակ էր  
ու քիչ մը չափազանցուած։

Հայ Տուամ. Էնկ. Թատերախումբը հետզհետէ  
պիտի բեմագրէ «Նամուս»ը . (Շիրվանդատէի),  
«Տէրվիշ»ը (Յ. Ճ. Սիրունիի), «Ճամբռն վրայ»ն  
(Լ. Շանթի), «Հակումը» և «Գլխու Պառյա»ը (Մեր.  
Պարսամհանի):

Մասնաւոր աղբիւրէ կ'իմանանք թէ Սելանիւ  
կի Հայութիւնը՝ Բարփղի Համահայկական Ազգ։  
Խորհուրդին իր պատուիրակը ընտրելու առիթով  
դիմած է Պ. Պ. Արշակ Զօպանեանի, լոնտոնա-  
բնակ Յարութիւն Մոստիչեանի, Մինաս Զերազի  
և Յովհ. Թումանեանի, Մինաս Զերազ, իր հի-  
ւանդագին վիճակը մէջ բերելով հազորդած է թէ  
չի կրնար այդ թեկնածութիւնը ընդունիլ: Պ. Պ.  
Արշակ Զօպանեան և Յարութիւն Մոստիչեան պա-  
տաժիսանած են, իրենց պատրաստակամութիւնը  
յայտնելով: Սելանիկի Հայութիւնը, Ընդհանուր  
ժողովին մէջ իրեն լիւզոր պատուիրակ ընտրած է  
Բարփղի Համահայկական Ազգ. Խորհուրդին հա-  
մար՝ Պ. Յարութիւն Մոստիչեան,

Съюзъ

